ՀՈԳԵՎՈՐ ԱՆԿՅՈՒՆ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻՆ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ԿԱՐԳԸ

Անցած կիրակի՝ հուլիսի 31-ին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը հանդես եկավ Սուրբ պատարագներին հավատացյալների մասնակցության ճիշտ ձեւի եւ կարգի մասին քարոզով:

...Մի անգամ սեղանի շուրջ, որտեղ ներկա էր նաեւ հոգեւորական, բաժակ բարձրացրին եկեղեցու պատվին: Անշուշտ, բոլորը խոսեցին իրենց Աստվածասեր ու Աստվածավախ լինելու մասին: Երբ մոտեցավ հոգեւորականի հերթը, նա ասաց, որ ուզում է բոլորին մի հարց ուղղել. «Արդյոք, դուք Աստծուն սիրո՞ւմ եք... ձեր կոշիկներից ավելի շատ»:

Բոլորը զայրացան եւ զարմացան, դիտողություն արեցին հոգեւորականին, թե ինչպես է իրեն թույլ տալիս Աստծու սերը համեմատել կոշիկների հետ: Հոգեւորականն իր հարցի էությունը այսպես պարզաբանեց.

- Ամեն առավոտ, տնից դուրս գալուց առաջ, ամեն մեկս մաքրում ենք, փայլեցնում մեր կոշիկները եւ այդ ընթացակարգին հատկացնում մի քանի րոպե: Բայց այդքան ժամանակ ամեն մեկս օրական արդյոք տրամադրում ենք Աստծուն: Ներկաներից ոչ մեկը ձայն չկարողացավ հանել: Եվ, իրոք, մենք անընդհատ խոսում ենք, որ Աստվածավախ ենք, առաջին քրիստոնյա ազգն ենք, ունենք հնագույն եկեղեցիներ ու տաճարներ: Բայց իրականում ոչ թե շաբաթվա ընթացքում ժամուկես, այլ օրվա մի քանի րոպե նույնիսկ, ցավոք, չենք կարողանում տրամադրել Աստծուն:

Դա նաեւ ապացուցվում է մեր առօրյա կյանքում. որեւէ մեկդ, երբ ներկայանում եք ձեր երեխայի դպրոցի տնօրինությանը, նախօրոք մտածում եք, որ պատշաճ հագնված լինեք եւ հարմար տեսքով ներկայանաք: Բայց երբ գալիս եք եկեղեցի, մանավանդ ամռանը, կարող եք ներկայանալ «շորտերով, չստերով, սպորտային հագուստով»:

Եթե հարցնեմ՝ եկեղեցին ի՞նչ է, անմիջապես կպատասխանեք՝ Աստծու տուն է: Գալիս եք Աստծու առաջ կանգնելու եւ այդպե՞ս եք հագնվում:

Սուրբ պատարագը տեւում է ժամուկես, բայց գալիս եք ժամը 12:30-ին, վերջին 10 րոպեին եւ ասում, որ մասնակցել եք պատարագի: Դուք, սիրելիներս, պատարագին մասնակցելու չեք եկել, դուք ուղղակի եկել եք եկեղեցի: Պատարագի մասնակցել՝ նշանակում է եկեղեցի գնալ ժամը 11-ին, մասնակցել առավոտյան խոստովանությանը, այլ ոչ թե վերջին խոստովանությանը, որը շատ սխալ է, եւ մենք մեզ այդ սխալը թույլ ենք տալիս մինչեւ այսօր: Առավոտյան խոստովանությանը մասնակցելուց հետո միայն պետք է մասնակցել պատարագին՝ այդ ժամուկեսը նվիրելով Աստծուն: Մինչդեռ, գերակշիռ մասը այդպես չի վարվում, թեեւ պահը գալուն պես, ասում, որ եկեղեցապաշտ եւ Աստվածասեր է:

Երբ որդին, մեծ թե փոքր, ծնողի ասածը չի կատարում, կամ նրա ուզածով չի ապրում, չեն ասում վատ երեխա է, բայց երբ մոռանում է իր ծնողին, բանի տեղ չի դնում, այդ զավակի մասին ասում են՝ ինչ վատ զավակ է մեծանում:

Այդպես է նաեւ մեր որդրեգրությունն Աստծուն: Եթե մենք մեր գործերով, մեր կյանքով անտեսում ենք Աստծուն, դա Աստծուն ուղղված հայհոյանք է համարվում: Եվ դրանից հետո, գալ եկեղեցի եւ ծնկաչոք աղոթել, ինչպես Քրիստոսն է ասել, գիտեցեք, այդ մեղքը չի ներվում:

Եկեք հասկանանք՝ ինչու այսօր մենք Թբիլիսիում ունենք երկու գործող եկեղեցի, եւ նույնիսկ տոն օրերին այդ եկեղեցիներ հաճախող հավատացյալների թիվը շատ քիչ է, մի եկեղեցին լցնել չենք կարող, նույնիսկ տոն օրերին: Եկեք ամեն մեկս մեզ ներքուստ հարց տանք՝ ինչո՞ւ ենք հաճախում եկեղեցի, եւ ինչո՞ւ են այդ եկեղեցիները գործում մեր սիրելի քաղաքում:

Թող Աստված մեզ բոլորիս ուժ, կարողություն եւ իմաստնություն տա, որպեսզի կարողանանք գիտակցել եկեղեցու կարեւորությունը, առաքելությունը, դերը մեր կյանքում, որպեսզի եկեղեցին մեր ընտանիքներում լինի՛ ոչ միայն ուրախ տոների՝ կնունքի, պսակի եւ, Աստված մի արասցե, դժբախտ օրերի, այլեւ միշտ:

Աստծու շնորհն ու խաղաղությունը բոլորիս այժմ, միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԱՄԱՌ Է, ՇՈԳ Է...

ՈՐՈՇԵԼ ԵՔ ՀԱՆԳՍՏԱՆԱ՞Լ. ՆԱԽՕՐՈՔ ՀԱՎԱՔԵՔ ԿԼՈՐԻԿ ԳՈՒՄԱՐ

Պարենամթերքի առաջին սպառման ապրանքների, դեղերի, բենզինի եւ, մի խոսքով, մյուս անհրաժեշտ ապրանքների գների ավելացումը, բնականաբար, անմիջական ազդեցություն է գործում ամառային հանգստի համար հատկացվող միջոցների վրա: Ակնհայտ է, որ այն գումարը, որն ավելի քան բավարար էր նախորդ տարիներին ծովափին կամ լեռնային հանգստավայրերում ամառն անցկացնելու համար, այս տարի բավարար համարվել չի կարող:

ՈՐՔԱ՞Ն ԿԱՐԺԵՆԱ ՆՈՐՄԱԼ ՀԱՆԳՍՏԱՆԱԼԸ

Փորձագետների համոզմամբ, արժեզրկումից բացի, կորոնավիրուսի համավարակի պայմաններում ներդրված սահմանափակումները լուրջ ազդեցություն գործեցին ոչ միայն զբոսաշրջության, այլ նաեւ հանգստացողների վրա: Այսօր զբոսաշրջության գործարարությունը նոր է սկսում աշխուժանալ, ինչը, բնականաբար, իր ազդեցությունն է գործում ծովափնյա եւ հանգստավայրային գոտու բնակարանների, հյուրանոցների, հասարակական սննդի օբյեկտների մատուցած ծառայությունների գների վրա: Այսպես, Արեւմտյան Վրաստանի Ուռեկիից ոչ հեռու գտնվող Կապրավանի փոքր գյուղում, եթե 2020 թվականին քոթեջում մեկ օրուգիշերվա գումարը կազմում էր 100 դոլար, ապա այսօր սահմանվել է 150 դոլարի սակագին:

ԾՈՎԱՓՆՅԱ ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐԵՐ

Ամառային շոգերին բոլորի համար ցանկալի է հանգիստն անցկացնել ծովափին, մասնավորապես, Բաթումիում, Քոբուլեթիում: Հանգստի համար գումարը ծրագրելիս, պետք է հաշվի առնել բոլոր մանրուքները: Մասնավորապես, եթե մտադիր ես ծովափ մեկնել գնացքով, ապա երկրորդ կարգի տոմսի արժեքը կազմում է 34 լարի, առաջին կարգինը՝ 74 լարի, իսկ բիզնես դասի տոմսի արժեքը կազմում է 124 լարի: Երթուղային տաքսիով Բաթումի հասնելու համար մեկ ուղեւորի ուղեվարձը կազմում է 30 լարի: Եթե ծրագրում ես ծովափ մեկնել սեփական ավտոմեքենայով, ապա պետք է նկատի ունենաս, որ Թբիլիսիից Բաթումի հասնելու համար վառելանյութի արժեքը կկազմի մոտավորապես 200-250 լարի:

Ինչ վերաբերում է բնակարանավարձին, Բաթումիում մեկ օրուգիշերվա բնակարանային արժեքը սկսվում է 35 դոլարից եւ հասնում է 100 դոլարի: Ամենատարածված բնակարանների գները մեկ օրուգիշերվա համար տատանվում են 50-80 դոլարի սահմաններում:

Բաթումիի ծովափում այս տարի շեզլոնգի (լողաբազկաթոռ) վարձակալման գինը կազմում է 5 լարի, իսկ հինգաստղանի «Շերաթոն» հյուրանոցի լողափին դրա գինը հասնում է 10 լարիի: Լողափին «Ամերիկանո» սուրճի մեկ գավաթի արժեքը կազմում է 7 լարի: Բաթումիում, Քոբուլեթիում հանգստացողների համար աջարական խաճապուրին, հավանաբար, ամենացանկալի ուտեստն է: Սովորական աջարական խաճապուրին այս տարի կարելի է գնել 14,50, մեծ չափի խաճապուրին՝ 17,50 լարիով: Թեեւ թե' Բաթումիում, թե' Քոբուլեթիում կան խաճապուրանոցներ, որտեղ խաճապուրիի գինը սահմանվել է 20 լարի: Նախորդ տարիների համեմատ, այս տարի խաճապուրանոցներն իրենց արտադրանքի գինը ավելացրել են 3-4 լարիով: Նշենք, որ ընդհանուր առմամբ, Բաթումիի սննդի օբյեկտներում եւս գները նշանակալի աճել են: Մասնավորապես, երեք անձի համար ճաշի արժեքը կազմում է առնվազն 50 լարի:

Ավելացել է հեծանվի վարձակալության արժեքը: Չափահասի համար մեկ ժամում հեծանվի վարձի արժեքը կազմում է 10, իսկ երեխայի համար՝ 5 լարի: Հատկանշական է, որ եթե տեղացիների համար տաքսիների սպասարկումից օգտվելը 5-10 լարի է, ապա զբոսաշրջիկների համար այդ գումարը կրկնապատկվում է:

ԼԵՌՆԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐԵՐ

Շատ ընտանիքներ, առավել եւս՝ անչափահաս երեխաներ ունեցող, ծովափի փոխարեն, գերադասությունը տալիս են լեռնային հանգստավայրերում մեկ կամ երկու շաբաթով հանգստանալուն:

Որպես լեռնային հանգստավայր՝ համաշխարհային հռչակ ունեցող Բակուրիանիում, այս տարի չորս հոգուց կազմված ընտանիքը երկու շաբաթում, այսինքն 13 օրուգիշերվա համար, ծախսելու է առնվազն 700 լարի: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ երեխաներից մեկը քնելու է ծնողների հետ: Վերոնշյալ գումարը սննդի եւ պարենամթերքի համար չի նախատեսվում:

Տասներեք օրուգիշերվա համար վերոնշյալ 700 լարին ցանկալի նվազագույնն է, քանի որ այս տարի վարձով տրվող բնակարանների գները նշանակալի աճել են, եւ այդ գումարը տատանվում է 1200-1600 լարիի շրջանակներում: Թեպետ հանգստացողներին առաջարկում են լավ վերանորոգված բոլոր հարմարություններով հանդերձավորված բնակարաններ՝ 2500-4000 լարիի սահմաններում: Հյուրանոցներում ծախսվելիք գումարը տատանվում է 4 հազարից մինչեւ 6000 լարի: Ինչ վերաբերում է հյուրանոցներում եռակի սնմամբ հանգստանալուն, ապա 13 օրուգիշերվա համար հարկ է վճարել 18 հազար լարի:

ՀԱՆԳԻՍՏԸ՝ ԴԱՇԲԱՇԻ ԿԻՐՃՈՒՄ

Եթե ինչ-ինչ պատճառներով, հանգստավայրերում կամ ծովափին հանգստանալը բացառվում է, ապա դուք կարող եք ձեզ թույլ տալ լիցքաթափվել Թբիլիսիից 90 կմ հեռավորության վրա գտնվող Դաշբաշում:

Այս օրերին լայն ժողովրդականություն ստացավ Ծալկայի մունիցիպալիտետի Դաշբաշի կիրճը՝ իր ադամանդե կամրջով: Այդ պաշտպանված գոտին մուտք գործելու համար, մեկ անձի տոմսն արժե 29 լարի: Եթե մտադիր եք ժամանցն անցկացնել կիրճի տարածքում տեղակայված քոթեջներում, ապա պետք է ծախսեք օրական մոտ 150 դոլար: Ճիշտ է, քոթեջները սահմանված են հինգ մարդու համար, եւ վերոնշյալ 150 դոլար գումարում սնվելը նկատի չի առնվում:

ԵԹԵ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՂ ԵՆ... ՁԵԶ ՍԻՐՈՎ ՍՊԱՍՈՒՄ Է ՓԱՐՎԱՆԱՅԻ ԱՓԱՄԵՐՁ ՓՈԿԱՆ

Առաջարկենք եւս մեկ, թվարկածներից թերեւս ամենամատչելի տարբերակը՝ հանգիստ Փարվանա լճի ափին, Թբիլիսիից 135 կմ հեռավորության վրա (երթուղային տաքսու ուղեվարձը Թբիլիսիից՝ 20 լարի): Սրբավայր, որտեղ իր առաջին կանգառն է գործել Վրաստանում քրիստոնեություն տարածած կապադովկիացի կույս Սուրբ Նինոն, եւ որտեղ այսօր գործում է Սուրբ Նինոյի անվան կանանց մենաստան:

Ենթակառուցվածքային տեսանկյունից, Վրաստանի այս եւս մեկ գեղատեսիլ վայրը զարգացման փուլում է: Այդուհանդերձ, մաքուր լեռնային օդը, բյուրեղյա ջուրը, սառնորակ աղբյուրները եւ, իհարկե, Փարվանայի շատ համեղ ու հարուստ ձկան տեսականին ապահովված են, կան ու կան:

Պարզելու համար, թե ինչո՞վ է գրավիչ եւ, ընդհանրապես, ինչ արժե հանգիստը Փարվանա լճի ափամերձ տարածքում, «Վրաստանը» կապվեց Փոկայի գյուղապետ Վալերի Ալվարդյանի հետ:

- Սկսեմ նրանից, որ Վրաստանի ամենամեծ Փարվանա լիճը գտնվում է Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոկա գյուղի մոտ, 2050 մ բարձրության վրա: Ուստի, եթե Թբիլիսում 35-38^{0} տապ է, ապա մեզ մոտ՝ ջերմաստիճանը տատանվում է 25-27, իսկ երեկոյան նույնիսկ 13-15 աստիճանի սահմաններում: Փոկայում հյուրանոց չկա, փոխարենը կան հյուրատներ, որոնք կարող եք վարձել, եւ պատկերացրեք՝ ամբողջ հետաքրքրությունը հենց դրա մեջ է: Դուք, փաստորեն, հայտնվում եք «պապենական», ավանդական, գյուղական տնակում, որի գոյության մասին, համոզված եմ, շատերդ երազել եք: Նման տնակների ամսական վճարը 500 լարի է, ներառյալ՝ գյուղական անարատ նախաճաշը՝ ձու, կաթ, կարագ, պանիր մեղր...

Սիրով սպասում ենք բոլորին:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ

Հետաքրքիր է՝ Վրաստանում ըստ գործունեության ոլորտի աշխատավարձի վիճակագրական դասակարգում իրականացվե՞լ է, թե՞ ոչ: Եթե այո, ապա յանկալի կլիներ իմանալ, թե ո՞ր ոլորտներում է աշխատավարձը բարձր:

Մ.ՍԱՐԳՍՅԱՆ

Բոլնիսի

Նախ նշենք, որ Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2022 թվականի առաջին եռամսյակում Վրաստանում միջին ամսական անվանական աշխատավարձը, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ, աճել է 15,1 տոկոսով՝ 190,3 լարիով եւ կազմել՝ 1 446,5 լարի:

Գերատեսչության տվյալներով, ըստ գործունեության տեսակի՝ համեմատաբար բարձր աշխատավարձ է գրանցվել հետեւյալ ոլորտներում.

* ֆինանսական եւ ապահովագրական գործունեություն՝ 3 037,5 լարի,
* տեղեկատվություն եւ հաղորդակցություն՝ 2 339,9 լարի,
* մասնագիտական, գիտատեխնիկական գործունեություն՝ 1 963,5 լարի,
* լեռնահանքային արդյունաբերություն եւ քարհանքերի վերամշակում՝ 1 900 լարի,
* շինարարություն՝ 1 870,6 լարի:

Նույն տվյալների համաձայն, 2022 թվականի առաջին եռամսյակում համեմատաբար ցածր աշխատավարձ գրանցվել է հետեւյալ ոլորտներում.

* կրթություն՝ 895,4 լարի,
* ջրամատակարարում, թափոնների կառավարման եւ վնասազերծման աշխատանքներ՝ 916,2 լարի,
* գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն եւ ձկնաբուծություն՝ 933,2 լարի,
* վարչական եւ օժանդակ սպասարկման գործունեություն՝ 1 034,5 լարի,
* բնակարանային հարմարությունների տրամադրման եւ սննդի մատակարարման գործունեություն՝ 1 045,5 լարի:

ԱՌՈՂՋԱԿԱՆ

ՃԱՐՊԱԿԱԼՈՒՄԸ՝ ԴԱՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈ՞Ւ

Վերջերս հեռուստատեսությամբ հաղորդում էր ճարպակալության վերաբերյալ: Նշվեց, որ ճարպակալումը այսօրվա դրությամբ համարվում է դարի ամենատարածված հիվանդությունը: Որքանո՞վ է դա իրական, եւ ինչպե՞ս կարելի է պայքարել ճարպակալության դեմ:

Ա.ՀԱՄԲԱՐՅԱՆ

Թբիլիսի

Իրոք, գլոբալ մասշտաբով անցկացված հետազոտության արդյունքներով, աշխարհի բնակչության շուրջ 60 տոկոսը տառապում է ավելորդ քաշից: Հատկանշական է, որ սույն ցուցանիշը նշանակալի ավելի բարձր է զարգացած երկրներում, իսկ զարգացող եւ առավել եւս թույլ զարգացման երկրներում այն չի գերազանցում 100 տոկոսը:

Ինչ վերաբերում է ճարպակալության դեմ պայքարին, ապա ամերիկացի գիտնականները պարզել են, որ օրական ոչ մեծ քանակությամբ ընկուզեղենի գործածումը կարող է նվազեցնել ճարպակալման զարգացման ռիսկը:

Այսպես, հետազոտության հեղինակների պնդմամբ, դրական արդյունքի համար բավական է գործածել ընկուզեղենի օրական նորմայի կեսը, այսինքն՝ 14 գրամ: Նրանց թվում, ովքեր կանոնավոր կերպով օրական այդ քանակությամբ ընկույզ են կերել, հինգ կիլոգրամից ավելի հավաքելու եւ ճարպակալմամբ հիվանդանալու ռիսկը նվազել է 23 տոկոսով, նրանց համեմատ, ովքեր դա չեն արել:

Հետազոտությունն ընդգրկել է գրեթե 300 հազար մարդու, որոնց վիճակը հսկել են ավելի քան 20 տարի: Գիտափորձի մասնակիցները տեղեկություն են տրամադրել իրենց քաշի, սննդաբաժնի, ալկոհոլի գործածման եւ ֆիզիկական ակտիվության մասին:

ՀՐԱՏԱՊ

ԻՆՉՊԵՍ ԱՄՌԱՆԸ ԽՈՒՍԱՓԵԼ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ՍՆՆԴԱՅԻՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՑ

Ամառային շոգերը հասել են կիզակետին: Շատ հաճախ ջերմաչափի ցուցիչը անցնում է չորս տասնյակի շեմը: Ամռան ամիսներին բարձրանում է վարակիչ հիվանդությունների եւ սննդային թունավորումների առաջացման ու տարածման վտանգը: Ինչպե՞ս պաշտպանվել վարակիչ հիվանդություններից, ինչպե՞ս կանխել սննդային թունավորումները:

Ամռան ամիսներին բարձրանում է վարակիչ հիվանդությունների եւ սննդային թունավորումների առաջացման ու տարածման վտանգը՝ պայմանավորված վարակիչ հիվանդությունների փոխանցողների բազմացման եւ արտաքին միջավայրում պահպանման համար նպաստավոր կլիմայական պայմաններով, ինչպես նաեւ արագ փչացող, պահպանման եւ իրացման հատուկ պայմաններ պահանջող սննդամթերքի (միս-մսամթերք, կաթ-կաթնամթերք, կրեմային հրուշակեղեն, մանկական սնունդ, չփաթեթավորված սննդամթերք, կարկանդակներ, փքաբլիթներ, խորոված, քաբաբ, գրիլ, արագ փչացող սննդատեսակներով սենդվիչներ, ձկնեղեն եւ այլն) բացօթյա պայմաններում եւ այդ նպատակի համար չնախատեսված վայրերում վաճառքի իրականացմամբ:

Առավել բարձր ռիսկի գործոն են սննդամթերքի բացօթյա պատրաստումն ու վաճառքը, որոնց դեպքում չի բացառվում սննդամթերքի մանրէային երկրորդային աղտոտումը, ինչը կարող է սննդային գործոնով պայմանավորված աղիքային վարակիչ հիվանդությունների (դիզենտերիա, սալմոնելոզ, շիգելոզ եւ այլն) եւ սննդային թունավորումների առաջացման ու տարածման պատճառ հանդիսանալ:

Աղիքային վարակիչ հիվանդություններից եւ սննդային թունավորումներից խուսափելու նպատակով, անհրաժեշտ է՝

* սննդամթերքը (մրգերը, բանջարեղենը, հատապտուղները) օգտագործելուց առաջ լավ լվանալ հոսող մաքուր ջրն տակ,
* պահպանել սննդամթերքը պատշաճ ջերմային պայմաններում՝ սառնարանում,
* ընտրել թարմ, ոչ ժամկետանց սննդամթերք,
* չգնել արտաքին միջավայրի գործոնների՝ արեւի ճառագայթների ու մթնոլորտային տեղումների, ինչպես նաեւ փոշու, ավտոտրանսպորտի արտանետումների անմիջական ազդեցության ներքո գտնվող մայրուղիներում, փողոցներում, բնակելի շենքերի բակերում բացօթյա պայմաններում պատրաստվող եւ վաճառվող, պատրաստման եւ պահպանման հատուկ պայմաններ պահանջող սննդամթերք՝ միս-մսամթերք, կաթ-կաթնամթերք, կրեմային հրուշակեղեն, ձու, ձկնեղեն, թարմ ձկնկիթ, պահածոյացված սննդատեսակներ, կարկանդակներ, փքաբլիթներ, խորոված, քաբաբ եւ այլն,
* ընդհանրապես բացառել կրեմային հրուշակեղենի օգտագործումը, չգնել տեղում պատրաստվող լցնովի փափուկ պաղպաղակ, զովացուցիչ ըմպելիքներ, կվաս, թարմ մրգերից պատրաստվող հյութեր,
* սննդամթերքը պահել փակ տարաներում՝ ճանճերի կողմից աղտոտումը կանխարգելելու նպատակով, ինչպես նաեւ՝ պատշաճ ջերմային պայմաններում,
* առանձնացնել հում սննդամթերքը եփածից, ինչպես նաեւ սննդի պատրաստման ժամանակ հում եւ պատրաստի մթերքի համար օգտագործել առանձին խոհարարական պարագաներ՝ դանակներ, ափսեներ, տախտակներ: Շատ կարեւոր է հետեւել, որպեսզի մսամթերքից եւ այլ հում մթերքից հոսող հեղուկը չաղտոտի պատրաստի սննդատեսակները (աղցաններ, միրգ ու բանջարեղեն եւ այլն),
* սնունդը լավ եփել կամ տապակել՝ առնվազն 70°C պայմաններում,
* պատահական վայրերից սունկ չգնել: Գնված սունկը լվանալիս՝ ուշադիր լինել եւ չօգտագործել արտաքին տեսքը լրիվ կամ մասնակի փոխած սունկ,
* հետեւել ձեռքերի հիգիենայի՝ լվանալ հաճախակի, յուրաքանչյուր անգամ սնունդ պատրաստելուց եւ ուտելուց առաջ, զուգարանից օգտվելուց հետո:

ԽՈՐՀՈՒՐԴ

ԻՆՉՈ՞Վ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼ ՆՎԵՐ ԳՆԵԼԻՍ

Նվերը պետք է տեղին լինի: Կարեւորը գինը չէ, այլ ճաշակը: Կասկածելի նվերների շարքում է հագուստը, քանի որ հնարավոր է, որ չկարողանաք ճիշտ գուշակել, թե տվյալ մարդուն ո՞ր ձեւը, գույնը եւ չափը հարմար կլինեն:

Եվ վերջապես, դուր կգա, արդյոք, նրան ձեր ընտրությունը: Ներքնազգեստներ սովորաբար գնում են շատ մտերիմ մարդկանց համար: Չգիտես ինչու, ընդունված է կարծել, թե կանայք սիրում են նվեր ստանալ ամեն տեսակի տնտեսական իրեր՝ թավաներ, կաթսաներ եւ այլն: Իրականում այդպիսի նվերներ սիրող կանանց թիվն այնքան էլ մեծ չէ: Նրանցից շատերը գերադասում են թեկուզ տնային տնտեսության մեջ չկիրառվող, բայց գեղեցիկ նվեր ստանալ: Հնուց եկած այն ասույթը, որ գիրքն ամենալավ նվերն է, մինչ օրս էլ հարյուր տոկոսով արդարացված է: Ցանկացած մարդու դուր կգա բովանդակալից գիրքը: Մշտապես հարգի նվերների շարքում իրենց հաստատուն տեղն են զբաղեցնում կոնֆետներն ու ծաղիկները: Առիթին համապատասխան կարող եք գնել ավելի մեծ տուփով եւ ավելի համեղ կոնֆետներ:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Քեզ խրախուսելու լավագույն ձեւը որեւէ մեկին խրախուսելն է:

Մարկ Տվեն

Նրանք, ովքեր ժլատ են գովասանքներում, աղքատ են արժանիքներով:

Պլուտարքոս

Անհնար է նվաստացնել մարդուն՝ չնվաստանալով նրա հետ միասին:

Ջ. Վաշինգտոն

Ով ստորացնում է շրջապատի մարդկանց, նա ինքը երբեք մեծ չի լինի:

Ի. Ջայմե

Մարդիկ հրեշտակներ չեն՝ հյուսված միայն լույսից, բայց եւ անասուններ էլ չեն, ում պետք է քշել նախրատեղ:

Վ. Գ. Կորոլենկո

Երկու մարդ կարող են միմյանց փրկել այնտեղ, որտեղ մեկը կործանվում է:

Օ. Բալզակ

Մինչեւ ամուսնուս չբռնացրի սիրուհու հետ, խորապես համոզված էի, որ ընկածներին ու մերկ մարդկանց, այն էլ՝ ոտքով, չեն խփում:

Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող
Նինոծմինդա

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ

Օգոստոսի 4-ին Հայաստանի կառավարությունը հաստատեց Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման՝ կոնսոլիդացիայի աջակցության 2023-2025 թթ. ծրագիրը:

Նշված ծրագրով կառավարությունը նպատակադրել է ընդլայնել կամ խոշորացնել հողակտորները հողային ռեֆորմների շրջանակներում եւ դրանով բարձրացնել գյուղատնտեսության արտադրողականությունը, ինչպես նաեւ խթանել գյուղատնտեսական հողերի մշակումը:

Հայաստանի էկոնոմիկայի նախարարության պարզաբանմամբ, այս ծրագիրն իր բնույթով նշանակում է, որ այն մարդիկ կամ կազմակերպությունները, այդ թվում՝ գյուղատնտեսական կոոպերատիվները, որոնք պատրաստ են համախմբել իրենց հողակտորները կամ գնել-հավաքել հողակտորները մեկ խոշոր՝ 30 հեկտարից մինչեւ 200 հեկտար հողակտորի մեջ, կառավարությունը պատրաստ կլինի փոխհատուցել այդ հողակտորների լավացման, այսինքն՝ մելիորացիայի եւ ջրավազանների կառուցման ծախսերի 50 տոկոսը:

Կառավարությունը պատրաստ է մեկ հեկտարին հատկացնել ընդհանուր 2 մլն 760 հազար դրամ ծախսերի 50 տոկոսը՝ մոտ 1,3 մլն դրամի չափով աջակցություն:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ. 14,2 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Եվրամիությունը հաստատել է «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» եւ «Հայաստանի ՔՈՎԻԴ-19 դիմակայման պայմանագիր» բյուջետային աջակցության ծրագրերի շրջանակում դրամաշնորհի ձեւով 14.2 մլն եվրո հատկացման փոխանցումը Հայաստանին:

Փոխանցման հաստատման որոշումը կայացվել է՝ հաշվի առնելով ընտրված ոլորտային ուղղություններում առաջընթացի գնահատման դրական արդյունքները, մակրոտնտեսական կայունությունը, պետական ֆինանսների կառավարման եւ պետական բյուջեի թափանցիկությունը:

14.2 մլն եվրո հատկացումների փոխանցումը կաջակցի Հայաստանին իրականացնել արդարադատության ոլորտի բարեփոխումները եւ մեղմել ՔՈՎԻԴ-19 համավարակի հետեւանքով առաջացած սոցիալ-տնտեսական խնդիրները: Եվրոպական միությունը կշարունակի աջակցել Հայաստանին իրականացնել ԵՄ-Հայաստան Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրին (ՀԸԳՀ) համահունչ ստանձնած բարեփոխումները:

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ 590 ՀԱԶԱՐ ԶԲՈՍԱՇՐՋԻԿԻ

Հայաստանի զբոսաշրջության կոմիտեի տվյալներով, 2022 թվականի առաջին կիսամյակում Հայաստան է այցելել մոտ 590,000 զբոսաշրջիկ: Սա բավական բարձր ցուցանիշ է հատկապես նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, երբ երկիր էր ժամանել 246,021 զբոսաշրջիկ:

Այցելուների կեսից ավելին ռուսներ են՝ մոտ 56 տոկոսը, շատ զբոսաշրջիկներ կան նաեւ Իրանից, Գերմանիայից, Վրաստանից եւ ԱՄՆ-ից:

Գերատեսչության հայտարարությամբ, աշխատանքներ են տարվում Ֆրանսիայից եւ ԱՄԷ-ից զբոսաշրջիկների թվի ավելացման ուղղությամբ:

Ավելի վաղ, OneTwoTrip առցանց ծառայության մասնագետները վերլուծել են օգտատերերի ամրագրման տվյալները եւ պարզել, որ ռուսներին ամենաշատը հետաքրքրում են դեպի Թուրքիա, Հայաստան եւ Ուզբեկստան ուղղությունները:

30 ԿՐԵԴԻՏԸ՝ ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Հայաստանի բարձրալեռ եւ սահմանամերձ բնակավայրերում, ինչպես նաեւ քաղաքային համայնքների որոշ դպրոցներում առկա են ուսուցիչների թափուր հաստիքներ: Առարկաների դասավանդման անհնարինության արդյունքում խախտվում է երեխաների կրթության իրավունքը:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորմամբ, մանկավարժի որակավորում չունեցող բարձրագույն կրթություն ստացած մասնագետները, որոնք ձեռք են բերել 30 կրեդիտ, հնարավորություն կստանան դասավանդել դպրոցներում:

Համաձայն օրենքի վերոնշյալ դրույթի, եթե առնվազն երկու անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը մնա չլրացված, ապա տվյալ թափուր տեղի համար կարող է դիմել նաեւ տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված կազմակերպության (կազմակերպությունների), այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատության առաջարկած համապատասխան կրթական ծրագրի միջոցով մանկավարժության առնվազն 30 կրեդիտ ունեցող անձը:

ԿԳՄՍ նախարարի հրամաններով, մանկավարժի որակավորում չունեցող անձանց առնվազն 30 կրեդիտ տրամադրելու նպատակով երաշխավորվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մշակած ծրագրերը եւ «Դասավանդի'ր, Հայաստան» հիմնադրամը՝ իբրեւ վերապատրաստող կազմակերպություն:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՆԱՃՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է, ԹԵԵՎ ԴՐԱՄԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄՆ ԱՅՆ ՄԱՍԱՄԲ ՉԵԶՈՔԱՑՆՈՒՄ Է

Հայաստանի Կենտրոնական բանկի տարածած հաղորդագրության համաձայն, հունիսին Հայաստանում 12-ամսյա գնաճը շարունակել է ավելանալ եւ կազմել է 10,3 տոկոս, սակայն Հայաստանի դրամի արժեւորումը մասամբ չեզոքացնում է գնաճի ավելացումը:

Երկրորդ եռամսյակի ընթացքում պահպանվել են համաշխարհային արժեշղթաների խաթարումները: Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում դիտարկվում է տնտեսական ակտիվության դանդաղում: Միջազգային ապրանքահումքային շուկայում նկատվում է գնաճային ճնշումների որոշակի թուլացում, սակայն գները շարունակում են մնալ պատմական բարձր մակարդակում:

Հաղորդագրության մեջ նշված է, որ 2022 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի տնտեսությունում դիտվել է սպասվածից բարձր ակտիվություն: Այն դրսեւորվել է հատկապես ծառայությունների ճյուղում: Դրական զարգացումներ են արձանագրվել նաեւ արդյունաբերության եւ արտահանման ոլորտում: Տնտեսական բարձր աճի ձեւավորման գործում գերակշռում են պահանջարկի գործոնները: Վերջինս շարունակում է մեծամասամբ պայմանավորվել միջազգային այցելուների եւ ՌԴ-ից դրամական փոխանցումների զգալի ներհոսքով: Բարձր պահանջարկը հանգեցնում է ընդհանուր գնաճային միջավայրի ընդլայնման եւ բարձր գնաճային սպասումների պահպանմանը: ՀՀ դրամի արժեւորումը մասամբ չեզոքացնում է գնաճի ավելացումը:

Ստեղծված իրավիճակում, 2022 թվականի օգոստոսի 2-ի նիստում, Կենտրոնական բանկի խորհուրդը որոշել է բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0,25 տոկոսային կետով՝ սահմանելով 9,5տոկոս: Կենտրոնական բանկի գնահատմամբ, դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարի ներքո 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի եւ միջնաժամկետ հորիզոնում կմոտենա նպատակային 4 տոկոսի ցուցանիշին:

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ՝ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆԻ ՄԻՋԵՎ



Օգոստոսի 2-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Հեռախոսազրույցում քննարկվել են Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ 2020 թվականի նոյեմբերի 9-ի, 2021 թվականի հունվարի 11-ի եւ նոյեմբերի 26-ի եռակողմ համաձայնագրերի կյանքի կոչման առանձին գործնական ասպեկտները:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել շփումները տարբեր մակարդակներում:

ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՈՐԴԻ ՆԻԿՈԼԱՆ ՆԵՏԵԾ ԻՐ 45-ԱՄՅԱԿԸ

Մեծանուն շանսոնյե Շառլ Ազնավուրի որդի, «Ազնավուր» հիմնադրամի համահիմնադիր եւ հոգաբարձուների խորհրդի նախագահ Նիկոլա Ազնավուրը օգոստոսի 5-ին նշեց 45-ամյակը:

«Ազնավուր» հիմնադրամը շնորհավորեց նրան եւ շնորհակալություն հայտնեց նվիրումի եւ կատարած մեծ աշխատանքի համար:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ՝ ՄԱԿ-Ի ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը՝ ՄԱԿ-ի սեռական եւ վերարտադրողական առողջության գործակալությունը, ուրախությամբ ներկայացնում է «Համատեղ նորարարական մարտահրավերներ» առաջին մրցույթի հաղթողներին, որոնց թվում է Հայաստան «Իմփակտ ինովացիաների ինստիտուտ»-ի «SafeYou» հավելվածը:

Մրցույթի հաղթող 10 կազմակերպությունները գործակալության հետ ստորագրել է ինը ամսվա պայմանագիր եւ առանց նախապայմանների ստացել 60,000 ԱՄՆ դոլար:

COVID-19. 1 434 ԴԵՊՔ ԵՎ 2 ՄԱՀ՝ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ, երկրում հուլիսի 25-31-ը ընկած ժամանակահատվածում կատարվել է 6487 թեստավորում, գրանցվել է կորոնավիրուսային հիվանդության 1434 նոր դեպք: Նշված ժամանակահատվածում գրանցվել է մահվան 2 դեպք:

Վերջին 7 օրվա ընթացքում առողջացածների թիվը կազմում է 908 մարդ: Ներկայում բուժում է ստանում 1666 քաղաքացի:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, համավարակի ժամանակահատվածում կատարվել է 3 մլն 161 հազար 172 թեստավորում, հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության 426 հազար 799 դեպք: Առողջացածների թիվը կազմում է 414 հազար 809, մահացել է 8 հազար 635 քաղաքացի:

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ 2022»

ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ ԵՐԵՎԱՆԸ ԿՀՅՈՒՐԸՆԿԱԼԻ «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ» ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆԸ

Ընթացիկ տարվա դեկտեմբերի 11-ին, Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, կանցկացվի «Մանկական Եվրատեսիլ 2022» մանկական երգի 20-րդ փառատոնը:

Մրցույթն այս տարի կանցկացվի Հայաստանում, քանի որ նախորդ տարի՝ «Մանկական Եվրատեսիլ 2021»-ում 224 ձայնով հաղթել է Հայաստանը ներկայացնող երգչուհի Մալենան: «Մանկական Եվրատեսիլ»-ը Երեւանը հյուրընկալում է երկրորդ անգամ: Նախորդը 2011 թվականին՝ Վլադիմիր Արզումանյանի «Մամա» երգի հաղթանակից հետո էր: Հայաստանը «Մանկական Եվրատեսիլ» մրցույթի պատմության ամենահաջողակ երկրներից մեկն է՝ 14 անգամ մասնակցել է եւ միշտ տեղ զբաղեցրել լավագույն տասնյակում:

«Մանկական Եվրատեսիլ 2022»-ին, այլ երկրների թվում, մասնակցության հայտ է ներկայացրել Վրաստանը: Փառատոնին Վրաստանը ներկայացնելու է 11-ամյա Մարիամ Վիգվավան:

Նշենք, որ երեւանյան փառատոնին Ռուսաստանը մասնակցության հայտ չի ներկայացնի: Այդ մասին տեղեկացրել է նախկինում փառատոնի ազգային ընտրությունը կազմակերպող Իգոր Կրուտոյի ակադեմիան: Ի տարբերություն Ռուսաստանի, փառատոնին մասնակցության հայտ ներկայացնողների թվում է նաեւ Ուկրաինան, որը հյուրընկալելու էր «Եվրատեսիլ 2023»-ը, թեեւ հայտնի պատճառներից ելնելով, Եվրոպական հեռարձակողների միությունը ընդունեց որոշում փառատոնն, Ուկրաինայի փոխարեն, անցկացնել Մեծ Բրիտանիայում:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ԵՐԵՔ ՕՐՈՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐԵՎՄՏՈՒՔՈՒՄ ԳՆԱՑՔԵՐԸ ՉԵՆ ԳՈՐԾԻ

Վրաստանում օգոստոսին երեք օրով բոլոր գնացքները կդադարեցնեն աշխատանքը դեպի երկրի արեւմտյան հատված:

Օգոստոսի 9-ին, 10-ին եւ 11-ին քաղաքացիները Թբիլիսիից չեն կարողանա մեկնել արեւմտյան Վրաստան՝ Բաթումիի, Քութայիսիի, Զուգդիդիի եւ Փոթիի ուղղությամբ: Ըստ այդմ, գնացքը կդադարեցնի աշխատանքը արեւմտյան շրջաններից Թբիլիսիի ուղղությամբ: Հետեւաբար, այս օրերին Թբիլիսիից հնարավոր կլինի գնացքով ճանապարհորդել միայն Խաշուրի եւ Բորժոմի:

Վրացական երկաթուղին բացատրել է գնացքների չեղարկման պատճառը՝ կիրականացվեն տեխնիկական աշխատանքներ նոր ուղղություններ ավելացնելու համար:

Օգոստոսի 12-ից գնացքների երթեւեկությունը կվերսկսվի սովորական ռեժիմով:

ՍՊՈՐՏ

ՇԱԽՄԱՏԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ ՀԱՏԵՑ ՄԻՋՕՐԵԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ՄԻԱՆՁՆՅԱ ԱՌԱՋԱՏԱՐՆ Է

Հնդկաստանի Չեննայ քաղաքում հուլիսի 29-ից օգոստոսի 10-ը շվեյցարական համակարգով անցկացվում է ավանդական շախմատի օլիմպիական մրցաշարը:

Մրցաշարի առաջին փուլի 6-րդ տուրից հետո, Հայաստանի տղամարդկանց հավաքականը, մրցաշարի մասնակից 188 հավաքականների միջեւ առաջինն է՝ տոնելով վեց անընդմեջ հաղթանակներ:

Վրաստանի հավաքականը՝ 4 հաղթանակով եւ 2 պարտությամբ առայժմ 27-րդն է:

Ինչ վերաբերում է կանանց օլիմպիական մրցաշարին, ապա Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները մրցաշարի մասնակից 162 հավաքականների միջեւ 5-ական հաղթանակով ու 1 պարտությամբ մրցաշարային աղյուսակում, համապատասխանաբար, զբաղեցնում են 9-րդ եւ 6-րդ հորիզոնականները:

ԳԱՆՁԱՑԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻԿ ԱՐՇԱԿ ԼՈՒԼՈՒԿՅԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՔՆԻՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ Է

Իտալիայի մայրաքաղաք Հռոմում եզրագիծը հատեց ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի մինչեւ 17 տարեկանների առաջնությունը: Հիշեցնենք, որ այս մրցաշարում Վրաստանի հավաքականի կազմում 51 կգ քաշային կարգում հանդես եկավ Վահան Տերյանի հայրենի, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձա գյուղի թիվ 1 հանրային դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Արշակ Լուլուկյանը:

Մրցաշարի առաջին փուլում Արշակի մրցակիցը Հայաստանի ներկայացուցիչ Նարեկ Հակոբյանն էր: Արշակ Լուլուկյանն առաջին գոտեմարտում նվազագույն հաշվով պարտություն կրեց, թեեւ պահպանում էր մրցաշարում ելույթները շարունակելու հնարավորությունը: Ցավոք, Նարեկ Հակոբյանը հաջորդ մրցամարտում պարտություն կրեց, իսկ Արշակը զրկվեց մրցաշարում ելույթը շարունակելու հնարավորությունից:

Ավելացնենք, որ ազատ ոճի ըմբշամարտի մինչեւ 17 տարեկանների աշխարհի առաջնությունը Վրաստանի հավաքականը եզրափակեց միայն երկու բրոնզե մեդալով:

ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻՆՉԵՎ 18 ՏԱՐԵԿԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ C ԴԻՎԻԶԻՈՆԻ ՉԵՄՊԻՈՆ

Բասկետբոլի Եվրոպայի առաջնությունը C դիվիզիոնում ավարտվեց Վրաստանի մինչեւ 18 տարեկան աղջիկների հավաքականի հաղթանակով:

Զվիադ Դիդբարիձեի մարզած թիմը եզրափակչում բավականին հեշտությամբ հաղթեց Մալթային՝ 61:37 հաշվով ու նվաճեց B դիվիզիոնի ուղեգիր:

Անդորրայում կայացած մրցույթից հետո, կազմակերպիչները C դիվիզիոնի լավագույն խաղացող են ճանաչել Վրաստանի հավաքականի անդամ Սալոմե Սվանիին: Առաջնության խորհրդանշական լավագույն հնգյակում ընդգրկվել է երկու վրացի՝ Սալոմե Սվանին եւ Լիկա Կվիրկվելիան:

Վրաստանի հավաքականը Եվրոպայի առաջնությունում ընդհանուր հաշվով չորս հանդիպում է անցկացրել եւ չորսում էլ հաղթել է: Խմբային փուլում վրացի աղջիկները հաղթեցին Ջիբրալթարի ու Մոլդովայի թիմերին, իսկ Ալբանիային՝ կիսաեզրափակիչ փուլում:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Փարիզի հանրահայտ աշտարակը: 6.Երկրի փոքրացված պատկերը թղթի վրա: 9.Կինոյի եւ թատրոնի հայտնի դերասանուհի ... Մնացականյան: 10.Եկ, մոտեցիր: 11.Մամիկոնյան իշխան: 12.Զորամասերի, զորքի սրընթաց շարժում հակառակորդի վրա: 13.Տղամարդու հագուստի մաս, շալվար: 14.Դեղամիջոց: 15.Տարբեր տեղերում օգտագործվող գործիք: 17.Վանի թագավորության թագավոր: 18.Առանց ցավի: 20.«..., ինչի՞ համար, Գարուն էր, չեկած ամառ» («Անլռելի զանգակատուն»): 23.Անորոշ դերանուն: 24.Բուհի որեւէ բաժանմունքի ղեկավար: 25.Վրաց հայտնի դերասան ... Գոծիաշվիլի: 27.Տնամերձ փոքրիկ հողամաս: 28.Արաքս գետի անվանումներից: 31.Չհասած, չհասունացած: 32.Անձնական դերանուն: 33.Գրքերի հրատարակչություն Թբիլիսիում: 35.Ամրացնելու, կապելու սարք: 36.Հայաստանում օգտագործվող երթուղային տաքսի: 37.Լիքը, առատ: 39.Համադասական շաղկապ: 40.Իտալացի կոմպոզիտոր Ջակոմո Պուչինիի օպերաներից: 42.Միջնադարի հայ բանաստեղծ: 43....մ, ...մնաբույժ, ...ղձ: 44.Թերակղզի Ռուսաստանում: 45.Կոպիտ, վայրենի: 47.Վառ կարմիրը: 48.Մեծ, մեծածավալ (համերգ): 52.Կմախք, ոսկորների ամբողջություն: 53.Հորիզոնի կողմ: 46.Հնագույն զենք: 57.Քաղաք Սիրիայում: 58.Կինոյի դերասանուհի ... Բորիսենկո: 59.«... քո է արդարություն եւ զորություն» (Աղոթքից): 60.Իբրեւ, կարծես:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Գերմանացի փիլիսոփա ... Կանտ: 2.Նորվեգացի գիտնական, բեւեռախույզ, հայ ժողովրդի մեծ բարեկամ ... Նանսեն: 3.Մունիցիպալիտետ Վրաստանում: 4.Գյումրին անցյալում: 5.Ջիու «կոշիկը»: 6.Հովհ.Թումանյանի հեքիաթի հերոսուհի: 7.Դորպատ քաղաքն այժմ: 8.Արեւմտահայ մեծ գրող, Ցեղասպանության զոհ: 12...., գաս, գա: 13.Խուրձ, կապ: 16.Չիմացող, չգիտեցող: 19.Արեգակնային համակարգի մոլորակ: 21.Կինոյի եւ թատրոնի վրաց խորհրդային դերասանուհի ... Թաղաիշվիլի: 22.Սեղանի խաղ: 23.«Եկան, եկան ... հարսներ» (Ա.Լեւոնյանի երգացանկից): 26.Հայ հանրահայտ նկարիչ: 27.Ֆրանսիացի գրող եւ գրաքննադատ ... Ֆրանս: 29.Հայ մեծ վիպասան Հակոբ Մելիք-Հակոբյանը: 30.Ժխտական նախածանց: 34.Ջինվորական պանթեոն Երեւանում: 35.Պարսկական արծաթադրամ: 38.Փոքրացուցիչ մասնիկ: 41.Ընտանի թռչուն: 44.Երեւանյան լիճ: 46.Եգիպտական փարավոն: 49.Չամուսնացած տղամարդ: 50.Գավառ Մեծ Հայքի Այրարատ նահանգում: 51.Ֆրանսիացի դրամատուրգ, վիպագիր, արվեստաբան: 53.Հիվանդության տեսակ: 54.Ե.Չարենցի «Լենինն ու ...» ստեղծագործությունը: 55.Մաշտոցյան այբուբենի զինվորներից:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Բակուր: 8.Բորսա: 10.Դարս: 11.Տիզ: 13.Վառեկ: 14.Եկամուտ: 16.Հնար: 17.Հաբ: 19.Կոկիկ: 21.Զառա: 22.Սար: 23.Նկուղ: 27.Ալար: 29.Օմեգա: 32.Լիր: 33.Փուշ: 35.Անուն: 36.Իթակե: 37.Թրաշ: 39.Թաջ: 42.Վազք: 44.Սոմալի: 46.Վալս: 49.Վեց: 50.Հակա: 53.Դհոլ: 54.Շալ: 55.Բիզ: 56.Դիաս: 57.Լոկ: 58.Նանա: 59.Կեռ: 60.Կաղ: 61.Սան:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ղազարոս: 2.Կրակ: 3.Իբսեն: 4.Երկար: 5.Պատուհաս: 7.Ուղեծիր: 9.Եզ: 12.Իտառ: 15.Կակուլի: 18.Բահ: 20.Կարեն: 24.Կալոշ: 25.Ղարիբ: 26.Ծանր: 28.Բուկ: 30.Մայա: 31.Գութ: 33.Փաշա: 34.Շենք: 38.Աբով: 40.Ջուլիակ: 41.Բացակա: 42.Վիհ: 43.Ջիկինա: 45.Մեշոկ: 47.Ադի: 48.Սոսե: 51.Աբաս: 52.Ազան:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՅՈՒՆ ՄՈՒՆՑԱՐՈՒՄ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445